2021

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման և կրթության
բարեփոխումների գծով պրոռեկտոր

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանն իր 30-ամյա գործունեության ընթացքում ռազմավարական գերակա խնդիրներ է համարել կրթության որակի ապահովումը, աշխատաշուկայի պահանջների բավարարումը և եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու հնարավորության ընդլայնումը:

ԱԲՀ-ի հիմնադիր, ռեկտոր Ն.Սարիբեկյանի ճիշտ, նպատակային, խելամիտ կառավարման արդյունքում համալսարանը ձեռք է բերել մեծ հեղինակություն, բարձր վստահություն՝ մատուցելով որակյալ կրթական ծառայություններ:

Հաշվի առնելով այն, որ բուհերի գործունեության վրա էական ազդեցություն են թողնում արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները, Համալսարանի կառավարման գործընթացում կարևորվել է նրա վրա ազդող առանցքային գործոնների վերհանումը, ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

ԱԲՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար պարբերաբար իրականացվել են հարցումներ, վերլուծվել են արդյունքները, որոնք օգտագործվել են ինքնավերլուծության, որակի ապահովման գործընթացների բարելավման նպատակով:

2020-2021 ուստարում Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի կողմից իրականացվել է Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն, որն ընդգրկել է 1991-2020թթ. ընկած ժամանակահատվածը:

Վերլուծության օբյեկտներ են ընտրվել.

- ԱԲՀ-ի գործունեության դիտարկվող ժամանակահատվածում՝ 1991-2020 թվականների դիմորդների դինամիկան
- ԱԲՀ-ի գործունեության դիտարկվող ժամանակահատվածում՝ մինչև 2020 թվականի շրջանավարտների դինամիկան:

Վերլուծության ընթացքում որպես հիմք են ընդունվել՝

- պետական մարմինների՝ կառավարության և ԿԳՄՍ նախարարության որոշումները և հրամանները,
- ԱԲՀ-ի ինքնավերլուծության զեկույցը և ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի զեկույցը (2019թ.),
- սոցիալական գործոնները:

Հիմնադրման օրվանից ԱԲՀ-ն իրականացրել է նպատակին համապատասխան գործունեություն՝ տրամադրելով հայալեզու կրթություն պետության կողմից հավատարմագրված ծրագրերով, որոնք համապատասխանել են 2001 թվականի պետական կրթական չափորոշիչներին:

Սակայն մի շարք գործոններով պայմանավորված (դրանց կանդրադառնանք ներքևում) ԱԲՀ-ում մինչև 2015 թվականը ուսանողների թիվը նվազել է և 2015-ից ԱԲՀ-ն փոփոխել է սպասարկվող կրթական և աշխատանքային շուկաները՝ թիրախավորելով միջազգային ուսանողների հավաքագրումը:

Համալսարանում հիմնադրման օրվանից մինչև օրս իրականացվում են «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրեր:

Բոլոնիայի գործընթացի ներդրումը ՀՀ բուհերում

(ՀՀ կառավարության 22.12.2005թ. որոշումը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին)

Հարկ ենք համարում նշել, որ Համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպելիս պարբերաբար անհրաժեշտություն է առաջացել կրթական ծրագրերի փոփոխություն իրականացնել՝ շնորհվող կրթական աստիճաններով պայմանավորված: Բոլոնիայի գործընթացին համահունչ Հայաստանի հանրապետության համալսարաններն իրականացրեցին համապատասխան վերակազմավորում, ինչպիսին է եռաստիճան համակարգի որդեգրումը և անցումը ԿՓԿԵՀ (Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ) կրեդիտային համակարգին, որոնք հանդիսանում են շնորհվող դիպլոմների համադրելիության երկու կարևոր հիմնասյուները ԵԲԿՏ-ի շրջանակներում:

ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացի ներդրմամբ, բուհերը, որոնց կրթական ծրագրերը նախատեսված էին դիպլոմավորված մասնագետի համար, վերանայեցին իրենց մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ ստեղծելով բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրեր:

Ավանդական բժշկության համալսարանում 12.12.2007թ.-ի գիտխորհրդի որոշմամբ (արձանագրությունը թիվ 4) ներդրվեց երկու բակալավրի և երկու մագիստրոսի կրթական ծրագիր՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով: Վերանայվեցին «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների նոր՝ անցումային ուսումնական պլանները՝ համապատասխանեցնելով օրենքով նախատեսված երկաստիճան կրթական համակարգի պահանջներին: Խնդիրն այն էր, որ բժշկական ուղղվածությունների պետական կրթական չափորոշիչները գտնվում էին լրամշակման և քննարկման փուլում: 17.05.2010թ.-ի գիտխորհրդի որոշմամբ՝ ԿԳ նախարարության կողմից ստացած բարձրագույն մասնագիտական կրթության բակալավրի որակավորման կրթական չափորոշիչների հիման վրա իրականացվեցին ուսումնական պլանների վերակառուցում, ինչպես նաև վերանայվեցին առարկայական ծրագրերը: Սակայն ըստ այդ չափորոշիչների «Ստոմատոլոգիա» մասնագիտության համար ուսման տևողությունը սահմանվել էր 4 տարի, այսինքն, ըստ այդ չափորոշիչների 2010-2011 ուստարվա ստոմատոլոգիական ֆակուլտետի 4-րդ կուրսեցիները պետք է ավարտեին և ստանային բակալավրի աստիճան, իսկ 5-րդ կուրսեցիները՝ դիպլոմավորված մասնագետի դիպլոմ: Խնդիր առաջացավ 4-րդ կուրսի համար կազմել անցումային ուսումնական պլան և ապահովել ուսանողների ուսումնառության շարունակությունը:

2011 թ. ԱԲՀ-ն թողարկեց վերջին դիպլոմավորված մասնագետները, ինչպես նաև՝ «Բժշկության բակալավր»-ի և «Ստոմատոլոգիայի բակալավր»-ի որակավորմամբ առաջին շրջանավարտները (ուսուցումն իրականացվել է անցումային ուսումնական պլաններով):

Համալսարանը 2010-2011 ուստարում իրականացրել է բակալավրի կրթական ծրագրով ընդունելություն «Ստոմատոլոգիա» և «Բուժական գործ» մասնագիտություններով:

2011-2012 ուստարվանից իրականացրել է նաև մագիստրոսական կրթական ծրագիր: 2013թ. ունեցել է իր առաջին «Բժշկության մագիստրոս» և «Ստոմատոլոգիայի մագիստրոս» որակավորմամբ շրջանավարտները:

2019թ.-ին Համալսարանն ավարտել են «Բժշկության մագիստրոս»-ի և 2020թ.-ին «Ստոմատոլոգիայի մագիստրոս»-ի որակավորմամբ շրջանավարտները, որից հետո ԱԲՀ-ն մագիստրոսական կրթություն չի իրականացրել:

2015թ-ից ներդրվել է անընդհատ և ինտեգրացված միաստիճան կրթական ծրագիր՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով:

Փոփոխություններով պայմանավորված խնդիրները

Վերոնշյալ փոփոխությունները որոշակի ազդեցություն են ունեցել բուհի գործունեության վրա թե՛ դրական և թե՛ բացասական առումով: Կրթական ծրագրերի իրար հաջորդող փոփոխություններն առաջացրել են անհրաժեշտություն ուսումնական գործընթացի վերապլանավորման, ներքին իրավական ակտերի վերանայման, լրամշակման և նոր կանոնակարգերի, ընթացակարգերի մշակման և կիրառման, դասախոսական կազմի համալրման, հիմնական և հրավիրված դասախոսների հարաբերակցության բալանսավորման, ուսանողական և դասախոսական կայուն թվաքանակի ապահովման և այլ հարցերի հետ կապված:

Ուսանողների հոսքի ավելացման միտումները հաշվի առնելով՝ դասախոսական կազմի կայունության ապահովման նպատակով բուհը կանխատեսումների միջոցով պատրաստել է դասախոսական կազմի պահուստ/ռեզերվ:

Ներկայացնենք հիմնադրման օրվանից Համալսարանի ընդունելության տվյալները:

Այսպես, 1991-1999 թթ. ընդունելության տվյալները (ըստ մասնագիտությունների) վկայում են այն մասին, որ դիմորդները նախընտրել են «Բուժական գործ» մասնագիտության կրթական ծրագիրը (գծապատկեր 1):

Դիմորդների թիվը ըստ տարիների

Գծապատկեր 1



Սկսած 2000 թվականից պատկերը փոխվել է, ինչպես երևում է գծապատկերներում (գծապատկեր 2 և 3) «Ստոմատոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրով դիմորդների թիվը կտրուկ ավելացել է: Դա պայմանավորված էր Համալսարանի մասնագիտական կողմնորոշման նպատակով անցկացված միջոցառումների ընդլայնմամբ:

Դիմորդների թիվը ըստ տարիների (2000-2007)

Գծապատկեր 2



Դիմորդների թիվը ըստ տարիների (2008-2014)

Գծապատկեր 3



ՀՀ բուհերի ընդունելության կարգի մասին ՀՀ կառավարության որոշումը և դիմորդների քանակի փոփոխությունը

2012 թվականից ԱԲՀ-ի դիմորդների ընդհանուր պատկերը ըստ մասնագիտությունների և թվաքանակի ևս փոխվում է:

Պատճառներից մեկը «Հայաստանի հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի» հաստատման մասին 26.04.2012թ. ՀՀ կառավարության № 597-Ն որոշումն էր: Համաձայն այդ կարգի ոչ պետական բուհերի համար արհեստականորեն

ստեղծվեցին ոչ հավասար մրցակցային պայմաններ: Այսպես, բժշկական կրթություն իրականացնող բուհերի մի շարք դիմորդների հետ մասնավոր զրույցներից դատելով, կարելի է ասել, որ նախ՝ պետական բուհերում անվճար տեղերով և մեկից ավելի հայտ ներկայացնելու հնարավորությամբ պայմանավորված, դիմորդները առաջնահերթությունը տալիս են պետական բուհերին, երկրորդ՝ ընդունելության 1-ին հայտը լրացնելիս ընդունելությունը կազմակերպող պետական բուհը ապակողմնորոշում է դիմորդներին՝ ուղղորդելով պետական բուհեր և, երրորդ, ունենք պետական բուհերում սովորելը գերադասող մտածելակերպով քաղաքացիներ:

Այս և ՀՀ սոցիալ-տնտեսական, դեմոգրաֆիական խնդիրներով պայմանավորված՝ ԱԲՀ-ում դիմորդ-ուսանողների թվաքանակը (ՀՀ քաղաքացիներից) աստիճանաբար նվազել է՝ նախորդ տարիների համեմատությամբ: Հետևաբար, կարող ենք առանձնացնել բուհի գործունեության վրա ազդող հատկապես հետևյալ արտաքին գործոնները՝

- ընդունելության գործող կարգը և պետական ու ոչ պետական բուհերի միջև ստեղծված անհավասար պայմանները,
- արտագաղթի ոչ ցանկալի ցուցանիշները:

Ինչպե՞ս է այն ազդել Համալսարանի գործունեության վրա: Վերջին մի քանի տարիներին ԱԲՀ-ն գտնվել է անցումային փուլում: Հայ ուսանողների և դիմորդների քանակի կայուն նվազման պատճառով համալսարանին վտանգ էր սպառնում՝ հետագա գործունեությունը շարունակելու հարցում: Ուսանողների քանակն ավելացնելու և ուսանողների վարձավճարներից ստացվող եկամուտների աճը խթանելու նպատակով Համալսարանի ղեկավարությունն իրականացնում է ռազմավարական վերակողմնորոշում դեպի անգլալեզու կրթական ծրագրեր՝ թիրախավորելով մասնավորապես միջազգային ուսանողներին:

ՀՀ ԿԳ նախարարի 28.12.2016թ. 1370-ԱՔ գրության հիման վրա ԱԲՀ-ի ռազմավարական վերակողմնորոշումը

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ԱԲՀ-ին իրավունք է շնորհում կազմելու անգլալեզու միջազգային կողմնորոշում ունեցող ծրագրեր (ՀՀ ԿԳ նախարարի 1370-ԱՔ գրության համապատասխան ԱԲՀ-ին թույլատրվեց իրականացնել օտարերկրյա դիմորդների ընդունելություն): Այս հանգամանքը մեծ հնարավորություն ընձեռեց համալսարանին արագ վերանայել կրթական ծառայությունների մատուցման մոտեցումները, մասնավորապես գործող կրթական ծրագրերը թարգմանվեցին անգլերեն լեզվով, պրոֆեսորադասախոսական կազմը համալրվեց անգլախոս բարձրակարգ բժիշկ դասախոսներով, ստեղծվեց «Արտաքին կապեր»-ի բաժինը, արդիականացվեց համալսարանի պաշտոնական կայքը և այլն:

2015 թ-ին ԱԲՀ-ում նմանօրինակ ծրագրերի հաջող իրականացումից հետո ուսանողների քանակը կրկնապատկվեց, իսկ ստացված եկամուտները՝ գրեթե եռապատկվեցին:

19.03.2015թ.-ի ՀՀ կառավարության որոշումը բժշկական մասնագիտությունների համար (մագիստրոսի կրթական աստիճանին հավասարեցված՝ անընդհատ և ինտեգրացված կրթական աստիճանի շնորհում)

Ըստ վերոնշյալ հրամանի 2014-2015 ուստարվանից բարձրագույն բժշկական կրթությունը իրականացվելու էր անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով, իսկ ներառյալ 2014-2015 ուստարում բուհ ընդունված կամ ուսումը շարունակող ուսանողները սահմանված կարգով իրականացնելու էին իրենց բարձրագույն մասնագիտական կրթությունը: Իսկ սա նշանակում է, որ Համալսարանը կրկին գտնվել է անցումային փուլում: Վերանայվել են երկու մասնագիտությունների գործող ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը: Նշենք, որ մինչ 2010 թ. համալսարանը առաջնորդվել է «Բուժական գործ» մասնագիտության 6 տարվա տևողությամբ ուսումնական պլաններով և «Ստոմատոլոգիա» մասնագիտության 5 տարվա տևողությամբ ուսումնական պլաններով:

2020թ. ԱԲՀ-ն թողարկել է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով իր առաջին շրջանավարտները, այդ թվում՝ 13 հայ և 6 օտարերկրյա շրջանավարտներ: Դեռ ուսումնասիրություններ չեն իրականացվել պարզելու, թե որքանով է ԱԲՀ-ի կրթական ծրագիրը իր շրջանավարտներին պատրաստում իրենց հայրենի երկրներում միջազգային քննություններին (FMGE), ինչպես նաև համապատասխան ազգային կամ միջազգային աշխատաշուկայի համար: Այն պլանավորման փուլում է:

2017 թ. արդեն համալսարանում սովորում էին թվով 125 օտարերկրյա ուսանող, այդ թվում՝ Հնդկաստանից՝ 35, Իրանից՝ 10, Իրաքից՝ 79, Մեծ Բրիտանիայից՝ 1, իսկ 2018թ-ին՝ թվով 285 օտարերկրյա ուսանող, որից Իրանից՝ 10, Հնդկաստանից՝ 89, Իրաքից՝ 66, Մեծ Բրիտանիայից՝ 19, Ավստրիայից՝ 1, Իռլանդիայից՝ 2, Գերմանիայից 1, Շվեդիայից՝ 1, Շրի Լանկայից՝ 1, Սիրիայից՝ 1:

Այսինքն, մեկ տարվա ընթացքում ԱԲՀ-ի օտարերկրյա ուսանողների թիվն աճեց 160-ով: Ցավոք, վերջին մի քանի տարիների ընթացքում հայ ուսանողների կողմից նոր դիմումներ չեն ընդունվել ո՛չ հայալեզու, ո՛չ անգլալեզու դասընթացների համար: Այսօր ԱԲՀ-ում սովորում են բացառապես օտարերկրյա ուսանողներ:

Օտարերկրյա դիմորդների քանակը ըստ տարիների

Գծապատկեր 4



Գծապատկեր 5

2020-2021 ուստարում ԱԲՀ-ում սովորում են ընդհանուր 366 օտարերկրյա ուսանողներ, որոնցից՝



Տարեցտարի իրականացվող համալիր միջոցառումների շնորհիվ, ԱԲՀ-ի կողմից մատուցվող որակյալ կրթական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը շատ արագ հասանելի է դարձել օտարերկրյա դիմորդներին և շահագրգիռ կազմակերպություններին, մասնավորապես՝ Հայաստանի ավանդական բժշկության համալսարանը պաշտոնապես ներառվել է Հորդանանի հանրապետության կրթության նախարարության կողմից ճանաչված բուհերի ցանկում: ԱԲՀ-ի հետ համագործակցության հուշագրեր են կնքել՝ «Campus International» Ltd (11.07.2016թ.) և «Study Medicine Europe» Ltd (19.02.2018թ.) (գծապատկեր 4):

Համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի արդյունքում իրականացված միջոցառումները

Հիմք ընդունելով ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական հանձնաժողովի առաջարկությունները (2019թ.) և ԱԲՀ-ի անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների վերաբերյալ Բելառուսի Հանրապետության «Գրոդնոյի պետական բժշկական համալսարան»-ի և «Վիտեբսկի պետական բժշկական համալսարան»-ի կողմից ներկայացված արտաքին փորձագիտական խմբի գնահատման եզրակացությունները՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների անընդհատ և ինտեգրացված մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խումբը 10.02.2020թ.-ից իրականացրել է մշտադիտարկման և վերանայման աշխատանքներ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել և վերլուծել բժշկական կրթություն իրականացնող բուհերի ուսումնական պլանները, դասավանդման գործընթացը՝ արդիականացնելու գործող կրթական ծրագրերը:

Բենչմարքինգի կազմակերպման գործընկերոջ ընտրությունը նպատակային էր այնքանով, որ ԱԲՀ-ի մեծ թվով շրջանավարտներ իրենց մասնագիտական գործունեությունը

իրականացնում են ԱՊՀ երկրներում, մասնավորապես՝ ՌԴ-ում և Բելառուսի Հանրապետությունում, բացի այդ գործընկեր բուհերում նույնպես ուսումնառում են օտարերկրյա քաղաքացիներ, ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական երկրներից:
Ներկայացնենք ԱԲՀ-ի շրջանավարտների թիվն ըստ տարիների:

Շրջանավարտների թիվն ըստ տարիների (1998-2005)

Գծապատկեր 6



Շրջանավարտների թիվն ըստ տարիների (2006-2013)

Գծապատկեր 7



Շրջանավարտների թիվն ըստ տարիների (2014-2020)

Գծապատկեր 8



Իր գործունեության ընթացքում համալսարանն ունեցել է 1000-ից ավելի շրջանավարտներ, որոնց մեծամասնությունը որպես պրակտիկ բժիշկներ, գիտաշխատողներ, դասախոսներ, առողջապահության կազմակերպիչներ հաջողությամբ աշխատում են ՀՀ և միջազգային առաջնակարգ կլինիկաներում և բժշկագիտական ամբիոններում: Շրջանավարտներից շատերն ունեն իրենց մասնավոր կլինիկաները, և համալսարանի որոշ շրջանավարտներ նույնպես աշխատում են այս կլինիկաներում: Շրջանավարտներից շատերը ստացել են Համալսարանում աշխատելու առաջարկ:

Շրջանավարտների բավարարվածության աստիճանը

Պարբերաբար իրականացվել են շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության հարցումներ, ստացված տվյալներն օգտագործվել են ՄԿԾ-ների բարելավման համար: ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման նպատակով ձևավորված աշխատանքային խմբում ներգրավվել է արտաքին շահակից՝ նպաստելու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ՄԿԾ-ների մշակմանը և բարելավմանը:

Շրջանավարտների մասնագիտական կարողությունների և անձնային հատկանիշների, պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների բացակայությունը

Համալսարանը կարևորում է արտաքին շահակիցների կարծիքները, նրանց պահանջները մեր շրջանավարտների մասնագիտական կարողությունների և անձնային հատկանիշների մասին, սակայն, պետք է նշել, որ նրանց շրջանում դեռևս հարցումներ, քննարկումներ չեն իրականացվել: Փորձ է արվել ներդնել արտաքին շահակիցների, մասնավորապես՝ գործատուների հետ համագործակցության որոշակի մեխանիզմներ, սակայն այդ մեխանիզմները արդյունավետ չեն գործել, քանի որ շահագրգիռ կողմերի մոտիվացիայի մակարդակը տարբեր է՝ համալսարան–շրջանավարտ-գործատու հարաբերությունները միջնորդավորված են: Ուսանողը համալսարանն ավարտելուց հետո ուսումը շարունակում է օրդինատուրայում, որից հետո իրավունք է ձեռք բերում աշխատելու: Այստեղ համալսարան-գործատու կապը խզվում է:

Ինչպես նշվում է ԱԲՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում, կրթության որակը եղել և մնում է ԱԲՀ-ի գործունեության առաջնահերթությունը: Համալսարանը կարևորում է յուրաքանչյուր կարողունակ անհատի՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը և իր ուսանողներին ապահովում է բարձրորակ և մատչելի կրթական փորձառությամբ, տրամադրում խորհրդատվական և ֆինանսական աջակցություն:

Ակադեմիական շարժունությունը

ԱԲՀ-ի կողմից իրականացվող հասանելի, թափանցիկ և որակյալ կրթական ծառայությունների մատուցման շնորհիվ վերջին տարիներին ակտիվացել է նաև ուսանողների ակադեմիական շարժունությունը: Համալսարանում գործում են ուսումնառության արդյունքների փոխճանաչման և կրեդիտների փոխանցման մեխանիզմներ, որոնց միջոցով ապահովվում է ուսանողների ներհոսքն արտասահմանից: Բոլոր գործընթացները իրականացվում են համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. օգոստոսի 25-ի N

1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի և Համալսարանում գործող համապատասխան կարգի: Այլ երկրներից տեղափոխված և ԱԲՀ-ում ուսումնառությունը շարունակելու համար կազմակերպվում է նաև նախնական գիտելիքների ստուգում, որից հետո դիմորդները կարող են հրամանագրվել և համարվել ԱԲՀ-ի ուսանող:

Այլ երկրներից տեղափոխված ուսանողների թիվը ըստ տարիների

Գծապատկեր 9



Հարկ ենք համարում փաստել, որ ԱԲՀ տեղափոխվող, ուսումը շարունակել ցանկացող դիմորդների թիվն ավելի մեծ է, քան ընդունվողներինը, քանի որ տեղափոխվող ուսանողների ակադեմիական տեղեկագրերի հիման վրա վերհանված առարկայական տարբերությունները շատ հաճախ չեն համապատասխանում ՀՀ գործող «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգով սահմանված դրույթներին:

Կորոնավիրուսի համավարակը և ուսումնական գործընթացը ԱԲՀ-ում

2019-2020 ուստարում այլ երկրներից տեղափոխված ուսանողների թիվը մեծ կլիներ, եթե չլիներ 2020 թվականի նոր կորոնավիրուսի համաճարակը, որի պատճառով ամբողջ աշխարհը հայտնվել էր արտառոց իրավիճակում և գտնվում էր մեկուսացման մեջ: Երկրում հայտարարվել էր արտակարգ դրություն և բուհերը ստիպված էին ուսանողների կրթության անընդհատությունը ապահովելու համար առցանց սկզբունքով ուսուցում իրականացնել:

Ստեղծված իրավիճակը, որը նաև մարտահրավեր էր բուհերի համար, ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման հսկայական փորձի ձեռք բերման հնարավորություններ ընձեռեց: ԱԲՀ-ում ապրիլի 16-ից մեկնարկած առցանց ուսուցման արդյունավետությունը գնահատելու, ինչպես նաև ուսուցման գործընթացի խնդիրներն ու թերությունները պարզելու, շտկելու, լուծումներ գտնելու նպատակով սույն թվականի ապրիլ ամսին ուսանողների շրջանում անցկացվեցին առցանց հարցումներ: Այնուհետև, արդյունքների վերլուծությունը գիտխորհրդում քննարկելիս առաջարկվեց կազմակերպել և անցկացնել ևս մեկ ուսանողական առցանց հարցում՝ գնահատելու ԱԲՀ-ում 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող դասընթացների որակը՝ հեռավար ուսուցման արդյունավետության մասին առավել օբյեկտիվ պատկեր ստանալու նպատակով:

Հարցումների վերլուծությունների արդյունքում ներկայացվեցին մի շարք առաջարկություններ: Այդ առաջարկությունների հիման վրա մշակվեցին՝

- Հեռավար ուսուցման մեթոդական ուղեցույց դասախոսների համար
- Օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգման հեռավար եղանակով կազմակերպման կարգ
- Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման կարգ
- Հեռավար ուսուցման ուսումնառողների ամփոփիչ գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգ:

Ինչևիցէ, ամփոփելով վերլուծության արդյունքները, կարող ենք հստակ փաստել, որ ԱԲՀ-ի ամբողջ անձնակազմը, ռեկտորի անմիջական ղեկավարությամբ, պարբերաբար իրականացնում է կրթական միջավայրի արդիականացում և բարեփոխումներ: Դրա վառ ապացույցն է 2021 թվականին մեկնարկող համալսարանական կամպուսի շինարարությունը: Ռազմավարական ծրագրի և դրանից բխող գործողությունների մակարդակով համալսարանում կենսական կարևորություն է տրվում բարձր մրցունակության ձևավորմանն ու պահպանմանը: Այն պետք է հիմնված լինի մարտահրավերները կանխատեսելու, դրանց պատասխանելու և շահակիցների կարիքները լավագույնս պատկերացնելու ունակության վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ամփոփելով վերլուծության արդյունքները, կարող ենք փաստել, որ Համալսարանի գործունեության և կառավարման վրա ազդում են այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները, ընդունելությունը, ֆինանսական ներհոսքը՝ ուսանողների թվով պայմանավորված, մրցակցությունը, համավարակը և այլ գործոններ, որոնք, հնարավորինս, ուսումնասիրվում և վերլուծվում են համալսարանի պատասխանատու մարմինների կողմից և գտնում իրենց արտացոլումը ռեկտորի տարեկան հաշվետվությունում, ռեկտորատի և գիտական խորհրդի որոշումներում: Ցավոք, Հայաստանում բարձրագույն կրթություն իրականացնող ոչ պետական բուհերը, ի տարբերություն պետական բուհերի, ունեն ոչ հավասար մրցակցության հնարավորություն և պայմաններ, մինչդեռ ամբողջ աշխարհում, անկախ բուհի կազմակերպաիրավական կարգավիճակից, բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելությունը իրականացվում է հավասար պայմաններում:

ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող ներքին գործոնների բացահայտման առումով քայլեր միշտ էլ ձեռնարկվել են՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանց բարելավման ուղղությամբ հնարավորությունները առավել կառավարելի են՝ ի տարբերություն արտաքին գործոնների (օրինակ՝ ընդունելության կարգով պայմանավորված ՀՀ քաղաքացի-դիմորդների թվի նվազումը):

Ամբողջացնելով դիտարկվող ժամանակահատվածում արտաքին գործոնների ազդեցությամբ պայմանավորված բուհի գործունեությունը՝ կարող ենք վստահորեն ասել, որ ԱԲՀ-ն ստեղծված իրավիճակներին համապատասխան մեծ ջանքեր և ռեսուրսներ (ֆինանսական և մարդկային) է ներդրել բուհի հետագա գործունեության ծավալման և միջազգայնացման զարգացման ուղղությամբ, չնայած, ինչպես նշվում է փորձագիտական

զեկույցում, արտաքին գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացը կրել է իրավիճակային բնույթ և կանոնակարգված չի եղել նախապես մշակված ընթացակարգերով, հստակ մեթոդաբանությամբ կամ գործիքակազմով:

Ներկայումս ԱԲՀ-ն թիրախավորել է միջազգային աշխատաշուկան և այս ուղղությամբ աշխատանքներ է իրականացնում՝ համագործակցելով արտերկրի միջազգային տարբեր կազմակերպությունների հետ՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Դիմորդների հավաքագրման մեխանիզմերի առկայությունը: 2.Ավանդական և ժամանակակից բժշկության համակցության շնորհիվ մրցակցային առավելություն ունենալը ազգային և միջազգային շուկաներում: 3.ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների շարունակական բարելավումը և ուսումնական բարենպաստ միջավայրի առկայությունը: 4.Ուսանողների ներհոսքի խթանումը: 5.Նոր բազմաֆունկցիոնալ մասնաշենքի կառուցման մեկնարկը:	1.Վերջին տարիներին հայ դիմորդների բացակայությունը: 2.Արտաքին գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացի հստակ մեթոդաբանության բացակայությունը: 3.Միջազգայնացման ուղղությամբ հստակ ճանապարհային քարտեզի կամ քաղաքականության բացակայությունը: 4.Ռազմավարական նպատակների և կատարողականի արդյունքների գնահատման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառումը:
Հնարավորություններ	**Վտանգներ**
1. Հետդիպլոմային ուսուցման կազմակերպում: 2. Բենչմարքինգի իրականացում: 3. Տեղական և միջազգային կառույցների հետ համագործակցության ընդլայնում:	1.Մասնավոր բուհերի համար ուսանողների ընդունելության ոչ նպաստավոր կենտրոնացված համակարգի առկայություն: 2.Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխություններ: 3.Պետական աջակցության բացակայություն: 4.Հանրապետությունից կադրերի արտահոսքը, արտագաղթի աճը: 5.Միջազգային ճգնաժամի հնարավոր դրսևորումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակնհայտ է, որ Համալսարանի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, ամբողջ կոլեկտիվը 30 տարվա ընթացքում հետևողականորեն ձգտել են իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխանող ուսումնագիտական գործընթաց, որի շարունակական բարելավումն ապահովելու նպատակով առաջարկվում է՝

1. Պարբերաբար իրականացնել բուհի գործունեության վրա ազդող գործոնների նպատակաուղղված ուսումնասիրություն:
2. Բարելավել ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության գործիքակազմը, օրինակ՝ այն իրականացնել գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմի միջոցով: ԳԱՑ-երի առկայությունն ապահովում է ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և առանձին գործողությունների գործնականությունն ու ԱԲՀ-ի կապը իր արտաքին և ներքին միջավայրերի կարևորագույն տարրերի հետ:
3. Մշակել միջազգայնացման ուղղությամբ հստակ ճանապարհային քարտեզ՝ հստակ պլանավորված գործողություններով և ակնկալվող արդյունքներով՝ բուհում միջազգայնացման գործընթացների արդյունավետ զարգացման և փորձի կուտակման ու փոխանակման նպատակով:
4. Իրականացնել միջոցառումներ մատուցված կրթական ծառայությունների որակի ճանաչման համար՝ օտարերկրյա (հնդիկ) ուսանողներին նախապատրաստելով FMGE քննության /www.natboard.edu.in/:
5. Նախաձեռնել միջոցառումներ բուհի գործունեությանը արտաքին շահակիցների՝ այդ թվում շրջանավարտների, մասնակցության ընդլայնման նպատակով: